

# Սուրբ Գրոց Սերտոդութիւն : Դաս Թիւ 11

**ՍԿԶՐՈՒՆՔ** – Ներքինայայտը (ծածկւածը) պէտք է մեկնաբանւի արտայայտով (բացայայտով) եւ ոչ թէ հակառակը: Սրա դասական օրինակներից է Յովհաննէս 3:16ի ընդհանրացած մեկնաբանութիւնը: Համարը արտայայտնապէս սովորեցնում է բոլոր նրանք որոնք «հաւատան» չեն «կորչել», այլ «յաւիտեանական կեանք» կունենան: Այս համարը ոչ մի բան չի ասում թէ որո՞նք են հաւատացողները, այսինքն թէ ո՞վ ունի կարողութիւնը կամ գորութիւնը հաւատալու: Իսկ շատեր ենթադրում են թէ այս համարի ներքինայայտ իմաստն է որ ամէն անհատ հաւատալու բնական կարողութիւն ունի ու կարող է լրացնի այն կոչը:

Մինչ Յովհաննէս 6:65ի մէջ Տէր Յիսուս ասում է « Ոչ ոք չի կարող ինձ մօտ գալ եթէ Հօրիցս տրւած չլինի նրան:» Այս համարը արտայայտաբար ու բացայայտ կերպով սովորեցնում է թէ առանց Աստուծոյ գերիշխան շնորհին ոչ ոք Քրիստոսի գալու բնական կարողութիւնը ունի: Նաեւ Հռովմայեցիս 3:10 եւ 11 համարները բացայայտ կերպով ուսուցանում են թէ ոչ ոք է փնտրում, փափաքում, կամ ուզում Աստուծոյ յետից գնալ: Ուրեմն այն ենթադրութիւնը թէ մարդիկ ունեն Քրիստոսին հաւատալու կարողութիւնը ու փափաքը, աչքաբող է անում արտայայտ ուսուցմունքը եւ պարտադրում է համակերպւել սխալ ենթադրութեան:

**ՍԿԶՈՒՆՔ** – Աստուծոյ խօսքի որեւէ համարի լրիւ իմաստը բազմաթիւ չէ այլ մէկ է: Մի համար կամ մի մաս կարելի է տարբեր գործնականութիւններ ունենայ, բայց այն ունի միայն մէկ ուղիղ իմաստ: Մենք նայելու ենք գրութեան եւ մեկնաբանելու ենք նրան իր բերականական իմաստով, նիշտ այնպէս ինչպէս հեղինակը մտադրել էր գրել նախնական ընթերցողներին, իր նախնական պատմական դրութեամբ, ու ոչ թէ մեկնաբանել այսօրւայ դիտանկիւնից: Օրինակի համար Յայտնութեան 2 եւ 3 գլուխների մէջ Քրիստոսի նամակները գրւած եօթը եկեղեցիներին ուղղւած են եօթը Փոքր Ասիոյ (Թուրքիա) մէջ գոյութիւն ունեցած պատմական եկեղեցիներին, թէեւ այս նոյն պատգամները կարելի են գործածել բոլոր ժամանակաշրջանների մէջ եկեղեցիներում որոնք նման դժարութիւններին են դիմագրաւում: Մենք պէտք է ձգտենք ուղիղ մեկնաբանել այն մէկ իմաստը որը ի մտի ունէր գրութեան հեղինակը (Ա. Տիմոթէոս 2:15):

Միւս կողմից կան հատուածներ որոնք կարելի է բաղկանան երկու մասերից (օրինակ՝ մարգարէութիւններ, նմանութիւններ եւ հականմանութիւններ), որոնք ունեն մօտ ապագայի եւ հեռու ապագայի կատարելագործութիւններ: Սրանք երկու տարբեր իմաստներ չեն, այլ Սուրբ Հոգու մտադրած մէկ իմաստի երկու բաժիններն են (Ելից 12:46, Ովսիա 11:1 պատմական իմաստներ, իսկ Յովհաննէս 19:36, Մատթէոս 2:15 Քրիստոսաբանական իմաստներ):

**ՍԿԶՐՈՒՆՔ** – Հասկանալ Աստուծաշնչի մէջ գործածւած նմանաբանական լեզուն: Հին Կտակարանի մէջ յիշւած ժողովրդները, վայրերը, ծէսերը, եւ եղելութիւնները Նոր Կտակարանի մէջ եղած աւելի մեծ իրականութիւններին են մատնանշում: Հին Կտակարանի մէջ եղած այսպիսի նմանութիւնները եւ պատկերագրութիւնները Նոր Կտակարանում Յիսուս Քրիստոսի մէջ յայտնւած նախապատկերացումներն են (Կողոսացիս 2:16-17):

**ՍԿԶՐՈՒՆՔ** – Ենթահողը ամէն բան է: Ինքնորոյն համարները անջատւած նախադասութիւններ չեն, այլ մաս են կազմում մի ամբողջականութեան:

1. Ամբիջական Ենթահող – Այն ինչ որ գտնուում է համարից առաջ (նախայայտ) ու այն ինչ որ գտնուում է համարից յետոյ (յետայայտ): Տես Մատթէոս 7:1-5 (չղատել) եւ 6 (նիւթի փոփոխութիւնը):
2. Լայն Ենթահող – Նոյն գիրքը, նոյն հեղինակի գրութիւնները, ամբողջ Հին եւ Նոր Կտակարանները: Տես Մատթէոս 18:15-18, Յովհաննէս 7:24 (կանչւած դատելու):
3. Պատմական Ենթահող – Ժամանակաշրջանը, սովորութիւնները, մշակոյթը, ժողովրդի եւ վայրերի պատմականը: (Տես Եբրայեցիս 1:1-2, Ա. Պետրոս 1:20 (վերջին օրերի եւ ժամանակների մասին):
4. Գրական Ենթահող – Գրականութեան Ոճը – Պատմութիւն, խրատական (ուսուցմունք), ռոտանտոր, նշանագրութիւն, պատկերաբանութիւն, եւ այլն:
5. Ենթահողային Կապերը – Ամենամօտիկ կապերը, շղկապները (Օրինակ՝ բայց, մինչեւ, որովհետեւ, հիմա, ուրեմն, այլ, հապա, վասնզի, եւ այլն): Կրկնւած բառեր եւ խորհուրդներ, գրութեան բնական բաժանմունքներ: (Տես Ա. Թեաաղոնիկեցիս 2:17ից մինչեւ 3:10 ուր թէեւ Աստուծաշնչի մէջ գլուխների բաժանմունք կայ, բայց այս համարները բնականաբար կցւած են իրարու):

Երբ Աստուծաշնչի մեկնաբանութեան օրէնքները հասկացում ու գործածում են ուղիղ ձեւով, Սուրբ Գրոց աշակերտը գօտեւորում է եւ կարողանում է ուղիղ բաժանել խօսքը, Սուրբ Գրոց աշակերտը գօտեւորում է եւ կարողանում է ուղիղ բաժանել խօսքը, նշոգրութեամբ վարել Աստուծոյ խօսքի հետ, ու գերծ մնալ ծումուած ու աղաւաղած եզրակացութիւններից (Բ. Տիմոթէոս 2:15):